ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ԻՐԱՔԱՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

/ուրբաթ, 28 Նոյեմբեր 1997/

Սոյն թուականի Նոյեմբեր 28-ին ի տօնին Առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդողիմէոսի, այլև Պաղտատի Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կառուցման 40-ամեակին առիթով, թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշն. Տ. Աւագ Ս. Արքեպիսկոպոս Ասատուրեանի կարգադրութեամբ և ձեռամբ տեղի կունենայ քահանայական ձեռնադրութիւն և օծում թեմիս արժանաւոր զաւակներէն Սարգիս սրկ. Խալաթեանի:

40-ամեայ եկեղեցին առաւօտեան ժամը 9.30-ին լի է հաւատաւոր մեր զաւակներով, որոնք ուշի ուշով ու անընկարագրելի ապրումներով կը հետեւին սուրբ արարողութեանց: Պատարագիչն է առաջնորդ Սրբազան Հայրը, իսկ խարտաւիլակ՝ Տ. Մակար աբղ. Յովհաննէսեան:

Հաւատացեալոց յուզումը իր գագաթնակետին կը հասնի, երբ կը հասնի պահը վերանուանումին: Ձեռնադրող Սրբազանը հոգեթովօրէն կ՚արտասանէ «Օրհնեսցի, օծցի և սրբեսցի ճակատ Տ. Արթուն քահանայիս...» բառերը, որով Հայաստանեայց Եկեղեցին կը հարստանայ նուիրեալ հոգևորականով մը ևս:

Ս. Պատարագին ներկայ ըլլալով Տ. Ներսէս Արքեպսկ. Պօղոսեան, «Ողջոյն»-ի պահուն կը շնորհաւորէ նորընծան, ստանալով անկէ «Համբոյր սրբութեան», յորմէհետէ հոգևորականաց դասը ևս կը մօտենայ նորաօծ քահանային:

Առաջնորդ Սրբազան Հայրը յատուկ պատշաճի քարոզ խօսելով, կը շնորհաւորէ համայն հաւատացեալ մեր ժողովուրդը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, մասնաւորաբար՝ Իրաքահայոց թեմը այս պատեհ և յոյժ հրճուալի առիթով:

Հետ Պատրագի, ներկաները կու գան աջահամբոյր ստանալու և շնորհաւորելու Տէր Հայրը, ապա խարտաւիլակ հայր սուրբը ձեռնադրեալը կը ներկայացնէ Առաջնորդ Սրբազանին, որն իր հերթին հայրական խրատներով և յորդորներով կը գօտեպնդէ Տ. Արթունը:

Թող Աստուած ուժ, կար և հաստատուն հաւատք պարգևէ նորաօծ Տէր Հայրին, սկսելու համար իր Աստուածահաճոյ ընթացքն ու առաքելութիւնը ուղիղ ճանապարհի վրայ ի փառս ժողովրդեան մերում և յանսասանութիւն Մայրենի Եկեղեցւոյս:

Տ. Արթուն քահանան 40-օրեայ առանձնացման կանոնական շրջանը կ՚անցնէ թեմիս Ս. Կարապետ վանքին մէջ:

ՄԱԿԱՐ ԱԲՂ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ